


# Ջրային Ռեսուրսների Կառավարում Հարավային Կովկասում

## Խրամի-Դեբեդ գետավազանի համապարփակ պլանավորում

| | |
|---|---|
| *Երկիր.* | Հայաստանի Հանրապետություն, Վրաստան |
| *Պատվիրատու* | ԱՄՆ ՄԶԳ/Դի.Էյ.Այ. |
| *Համակատարողներ* | ՇՄԻՊԿ ՀԿ (Հայաստան), «ՕՐԻԳՈ» խորհրդատվական կազմակերպություն և «Փոքրիկ քաղաք» ՀԿ (Վրաստան) |
| *Ժամկետները* | դեկտեմբեր 2001թ. – դեկտեմբեր 2002թ. |



***<u>Տեխնիկական առաջադրանք</u>***

1. Շահագրգիռ կողմերի որոշում
2. Ջրօգտագործումների ցուցակագրում
3. Ծրագրային առաջարկությունների հավաքում և գնահատում
4. Հասարակական իրազեկության բարձրացում
5. Գետավազանի համապարփակ պլանի պատրաստում
6. Փորձնական ցուցադրական ծրագրեր

*Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը.*

- ✓ Խրամի-Դեբեդ գետավազանում բացահայտվել են շահագրգիռ կողմեր՝ ջրօգտագործող ազդակիրներից, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, ՀԿ-ներից, և այլ կազմակերպություններից և կազմակերպվել է սեմինար նրանց համար:
- ✓ Հավաքագրվել և վերլուծվել են ջրային ռեսուրսների պահպանման, կառավարման և օգտագործման հետ կապված տվյալները, բացահայտվել են առկա հիմնախնդիրները, կարիքները:
- ✓ Կատարվել է քանակական և որակական մոնիտորինգի դիտակետերի, ջրառի և արտանետման կետերի գույքագրում:
- ✓ Խրամի-Դեբեդ գետավազանում հավաքագրվել, կազմվել և, ըստ գերակայության, ցանկագրվել են ջրային ռեսուրսների պահպանման, կառավարման և օգտագործման հետ կապված ծրագրային առաջարկությունները:
- ✓ Կազմակերպվել են հասարակական իրազեկության արշավներ, տպագրվել և բաժանվել են տեղեկատվական թերթիկներ:
- ✓ Վերլուծվել և առաջարկվել են գետավազանի համապարփակ պլանի ձևավորման մոտեցումներ: Առաջարկվել է ԳԱՀ Պլանի մշակման մեթոդոլոգիա:
- ✓ Պատրաստվել է ուսումնասիրվող տարածքի գետավազանային համապարփակ պլանի նախագիծ, այնուհետև պլան:
- ✓ Պատրաստվել է Փամբակի ենթավազանի ջրառեսուրսային համակարգի ցուցադրական մոդելը:
- ✓ Մշակվել են փորձնական-ցուցադրական փոքր ներդրումներ պահանջող ծրագրեր:




- ✓ Գետավազանային համապարփակ կառավարմանն աջակցելու նպատակով մշակվել է գետավազանային խորհուրդների ստեղծման գաղափարը և դրա իրականացման համար ցուցաբերվել է աջակցություն ԳԱԽ-ի ընտրված անդամներին:

***<u>Ծրագրի նպատակը</u>***

Խրամի-Դեբեդ գետավազանում տեղական մակարդակով համապարփակ գետավազանային պլանավորման ցուցադրում և տարածաշրջանում ունակությունների ստեղծում: